ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-Ի

կառավարման խորհրդի որոշում 2021թ. հուլիսի 8-ի №7 նիստում

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Կառավարման և վարչարարության» քաղաքականությունը
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի

նախագահ՝ Ա. Գրիգորյան

Հաստատված է ՀՀ ԿԳՄՄՆ ԱՊՔ
մանկավարժական խորհրդի
2021թ. հուլիսի 7-ի N 9 նիստում
ԱՊՔ մանկավարժական խորհրդի
նախագահ՝ Է. Գ. Գասպարյան

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն քաղաքականության իրավական հիմքերն են «Կրթության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ԿԳՄՄՆ ԱՊՔ (այսուհետ՝ ԱՊՔ) «Կառավարման և վարչարարության» ընթացակարգը, ԱՊՔ որակի ապահովման քաղաքականությունը, ԱՊՔ որակի ապահովման հայեցակարգը, ԱՊՔ ներքին կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

1.2 ԱՊՔ-ում կառավարման և վարչարարության գործընթացներն իրականացվում են որակի կառավարման սկզբունքով («պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում» շրջափուլով):

1.3 Սույն քաղաքականությունը կարող է փոփոխվել՝ համաձայն ԱՊՔ կանոնադրության:

2. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Սույն քաղաքականության *նպատակն է* կազմակերպել և իրականացնել ԱՊՔ կառավարման և վարչարարության մոտեցումներն ու սկզբունքները՝ հաշվի առնելով որակի կառավարման ընթացակարգը:

3. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

Սույն ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱՌՎՈՒՄ Է ԱՊՔ կառավարման և վաևչարարության ոլորտում:

4. ԱՊՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

4.1 **Կառավարման խորհուրդ:** Քոլեջի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը քոլեջի Կառավարման խորհուրդն է (այսուհետ՝ ԿԽ), որը ստեղծվում է 5 տարի ժամկետով և բաղկացած է 11 անդամներից: Կառավարման խորհուրդը ձևավորվում է քոլեջի հիմնադրի, լիազորված մարմնի, քոլեջի դասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչներից:

4.2 **Տնօրինական խորհուրդ:** Քոլեջի տնօրինական խորհուրդը տնօրենին կից խորհրդակցական մարմին է: Տնօրինական խորհուրդն իրեն ընձեռված լիազորությունների շրջանակում քննարկում է քոլեջի գործունեության բոլոր ոլորտներին վերաբերող հարցերը: Քոլեջի տնօրինական խորհրդի կազմում ընդգրկվում են տնօրենը, տնօրենի օգնականը, տնօրենի տեղակալները, որակի պատասխանատուն, բաժնի վարիչները, հաշվապահը, քաղաքացիական պաշտպանության շտաբի պետը, կարիերայի խորհրդատուն, հոգեբանը, գրադարանավարը, մեթոդխորհրդի պատասխանատուն, ուսանողական խորհրդի նախագահը:

4.3 **Քոլեջի մանկավարժական խորհուրդ:** Քոլեջի մանկավարժական խորհուրդը (այսուհետ՝ ՄԽ) ձևավորվում է ԱՊՔ կանոնադրության համաձայն՝ որպես քոլեջի ուսումնամեթոդական, մանկավարժական և գիտատեխնիկական, տնտեսական գործունեությունը պլանավորող, համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին: ԱՊՔ ՄԽ կազմում ի պաշտոնե ընդգրկվում են տնօրենը (նախագահ), տնօրենի տեղակալները, որակի պատասխանատուն, կարիերայի խորհրդատուն, բաժնի վարիչները, դասախոսները, արտադրական ուսուցման վարպետները:

5. ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ

Պլանավորում

ԱՊՔ –ում պլանավորման գործընթացն իրականացվում է հետևյալ մակարդակներում՝

- ռազմավարական պլանավորում,
- մարտավարական պլանավորում,
- օպերատիվ պլանավորում,
- պլանավորում՝ ըստ գործողությունների (ֆինանսական, ինովացիոն և այլն):

Իրականացում

Քոլեջի կողմից պլանավորված գործընթացները և գործողությունները ենթակա են իրականացման ԱՊՔ-ի զարգացման ռազմավարական ծրագրին համապատասխան՝ ըստ սահմանված պատասխանատուների և ժամկետների

(հաստատված գործողությունների պլանավորման ժամանակացույցին համապատասխան):

Վերահսկում

ԱՊՔ-ի կողմից իրականացվող գործընթացների կատարման վերահսկողության համար պատասխանատու են կրթության որակի վերահսկման հանձնաժողովը և տնօրենի հրամանով հաստատված աշխատանքային այլ խմբեր: Վերահսկողությունն իրականացվում է մշտադիտարկման կամ ներքին գնահատման միջոցով:

Վերանայում

Տվյալ փուլում իրականացվում է առկա պլանների և ծրագրերի վերանայում՝ կառավարման և վարչարարության տարբեր մակարդակներում: Վերանայման համար հիմք են հանդիսանում վերահսկողության արդյունքները և աշխատանքային խմբերի կողմից ներկայացված հաշվետվություններն ու առաջարկությունները:

Բարելավում

Կառավարման և վարչարարության գործընթացների բարելավման նպատակով վեր են հանվում տվյալ ոլորտում առկա ուժեղ ու թույլ կողմերը և մարտահրավերները: Կառավարման տարբեր մակարդակների վրա կայացվում են որոշումներ այս կամ այն կառավարման գործընթացի բարելավման ուղղությամբ, կազմվում են բարելավմանն ուղղված միջոցառումների պլաններ:

6. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Կառավարման մեթոդների և մոտեցումների մշակումն ու ներդրումը պետք է երաշխավորի քոլեջի կառավարման համակարգի արդյունավետ աշխատանքը:

7. ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սույն քաղաքականության ներդրման և իրականացման պատասխանատուներն են՝

- տնօրենը,
- տնօրենի տեղակալները,
- կրթության որակի վերահսկման հանձնաժողովի նախագահը,
- բաժնի վարիչները: